ԱԶԳ, 2 նոյեմբեր 1995, հինգշաբթի N° 211 (965)

# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ավելի քան հազար մարդ ԱՄՆ-ի 28 նահանգներից եւ 12 երկրներից անցել է ուսուցման ամերիկյան էլեկտրոնային դասընթացը. նույնիսկ ստացել գիտական աստիճան: Ի՞նչ է իրենից ներկայացնում ուսուցման այդ ձեւը. ինչպես է կազմակերպվում: Այս հարցերով դիմեցինք ծրագրի ղեկավար «Որոնում» կենտրոնի տնօրեն տնտեսագիտության դոկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու Գրիգոր Վահանյանին:

Հայաստանի համար այժմ ստեղծվել է եզակի հնարավորություն կատարելու որակապես նոր քայլ կրթության զարգացման ուղղությամբ: Ժամանակակից գիտությունը միմյանց է կապել այն բոլոր ցանկացողներին, ովքեր հակված են փոխանակել իրենց գիտելիքները, գտնել բարեկամներ, հետաքրքիր զրուցակիցներ աշխարհի տարբեր վայրերից եւ, վերջապես, ստանալ լիարժեք կրթություն եւ ամերիկյան հեղինակավոր համալսարանի վկայական: Օգտվելով էլեկտրոնային համակարգչային ցանցից, մարդիկ հնարավորություն են ստացել նաեւ օգտվելու միջազգային տեղեկատվական աղբյուրներից: Այդ գաղափարը պատկանում է տեղեկատվական կառավարման միջազգային դպրոցի անդամ, «Նոր դպրոց» հաստատության հիմնադիր ու տնօրեն, պրոֆեսոր Պոլ Լեւինսոնին, որը մշակել է յուրահատուկ հաղորդակցման ուսուցման առաջավոր համակարգ անհատական համակարգիչների այդպես կոչված «on-line» («գծի վրա») օգնությամբ:

Connected Education («Ուսուցում գծի վրա») միջազգային կազմակերպությունը, որի կենտրոնը գտնվում է Նյու Յորքում, սոցիալական հետազոտությունների նոր դպրոցի, Նյու Յորքի պոլիտեխնիկական համալսարանի եւ այլ կազմակերպությունների հետ միասին առաջարկում է ուսուցման դասընթացներ բացառապես համակարգչային ցանցի միջոցով: Այդ կորպորացիան նախագծում եւ տրամադրում է համակարգչային ծառայություններ ուսուցման, գործարար շփումների, բիզնեսով զբաղվելու, ինչպես նաեւ կառավարական համակարգերի աշխատանքի համար:

Էլեկտրոնային համալսարանային ավանը (Electronic Campas) տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային համակարգ է Նյու Ջերսիի տեխնոլոգիական ինստիտուտում, որը թույլ է տալիս ունկնդիրներին անցնել ուսուցման առաջարկվող դասընթացը, ուղարկել կամ ստանալ տեղեկություններ, հանգստանալ

էլեկտրոնային «սրճարանում» (հատուկ համակարգ, որն ընդգրկում է նույնիսկ համակարգչային խաղեր), եւ այդ ամենն օրվա ցանկացած ժամի՝ երկրագնդի ցանկացած կետից, եթե ունեք անհատական համակարգիչ, մոդեմ (սարքավորում, որ թույլ է տալիս համակարգիչը միացնել հեռախոսային գծին) եւ հեռախոս: Ուսուցումը կատարվում է անգլերեն: Որպես ուսուցման նման մեթոդի առավելություն նշենք, որ Արեւմուտքի եւ Հայաստանի միջեւ ստեղծվում են նոր կապեր, համագործակցություն է ձեռք բերվում երիտասարդ լիդերների պատրաստման բնագավառում, հայտնաբերվում են օժտված երիտասարդներն ու գիտնականները, շփման հնարավորություն է առաջանում ոչ միայն դասավանդողների, այլեւ աշխարհի առաջատար երկրների փորձագետների հետ:

Ուսուցման վարձը մյուս ձեւերի համեմատությամբ զգալիորեն ցածր է: Այնպես որ, անհրաժեշտություն չկա կրթություն ստանալու նպատակով մեկնել ԱՄՆ, Անգլիա կամ Ֆրանսիա: Ի դեպ, Ռուսաստանում արդեն կան մասնագետներ, որ ավարտել են Նյու Յորքի համալսարանը:

Հաշվի առնելով ամերիկյան մասնագետների փորձը, մեզ մոտ իրականացվում է մի ծրագիր, որով փորձ է արվում ստեղծել հայկական էլեկտրոնային համալսարան, որը հնարավորություն կստեղծի տարածել հայ մշակույթը, լեզուն, արվեստն ու գիտությունը առաջին հերթին սփյուռքի գաղթօջախներում: Այսօր «Արմինկո» եւ «Ինֆորմ» ձեռնարկությունների էլեկտրոնային ծառայությունները թույլ են տալիս համակարգչի, մոդեմի ու հեռախոսի միջոցով կապվել միջազգային հաղորդակցման ցանցի հետ:

Յու.Սահակյան